Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● էլ. հասցե ● Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Գործնական աշխատանքների դերը ձևավորող գնահատման գործում աշխարհագրության դասերին
Ուսուցչի տվյալներ ● Անուն, ազգանուն, հայրանուն ● Մասնագիտություն ● Հեռախոս ● էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Գայանե Ալավերդյան Սուրենի Մանկավարժ +374 43 10 13 22 gayaneal272@gmail.com Աշխարհագրություն, բնագիտություն 5-12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	Կոտայքի մարզ, Կամարիսի Ազատ Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոց 094 41 18 01 kamaris@schools.am

Բովանդակություն

Ներածություն----------

---------- 3 3

1.Գործնական աշխատանքի կարևորությունը---------- **4**

2.Գործնական աշխատանքի կարևորությունը որպես ձևավորող գնահատում-------- **8**

3.Աշխարհագրության դասավանդման գործում նրա կարևորությունը և անհրաժեշտությունը---------- 14

Եզրակացություններ, առաջարկություններ---------- **16**

5

Օգտագործված գրականության ցանկ---------- **18** **6**

7

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ուսումնասիրության նպատակն է գործնական աշխատանքների դերը աշխարհագրության դասերին: Հարց: Որքանո՞վ են նպաստում գործնական աշխատանքները ձեւավորող գնահատմանը աշխարհագրության դասերին միջին դպրոցում (նյութը ներկայացվում է Կամարիսի միջնակարգ դպրոցի օրինակով):
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակության ն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	լեզվական գրագիտություն և կարողունակություն սովորել սովորելու կարողունակություն ինքնահանաչողական և սոցիալական կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	6-9-րդ դասարան Տղա՝ 44 Աղջիկ՝ 51
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Որակական մեթոդ,դիտարկման մեթոդ
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	2023 թ. Իրականացման ժամ- 12.08-20.09.2023թ.

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>	Դպրոցական աշխարհագրության բովանդակության հիմում ընկած են բնության և հասարակության օրենքների օբյեկտիվ իրողությունն ու ճանաչելիությունը, բնության և հասարակության փոխադարձ կապը, տարածաժամանակային փոխազդեցությունները և դրանց առաջընթաց զարգացումը: Ուսումնասիրվող աշխարհագրական օբյեկտների և երևույթների փոխազդեցություններն ու զարգացումները բացահայտվում են հակադրությունների միասնության ու պայքարի, քանակական փոփոխություններից որակականին անցնելու, բացասման բացասման օրենքների հիման վրա: [3, 44-48]
Հետազոտության ընթացքը	Գործնական աշխատանքը կատարվել է խմբային եղանակով՝ կիրառվել է «Մոբերի քարտեզագրում» մեթոդը: Այս մեթոդը օգնում է աշակերտներին թեման կամ խնդիրը դասակարգել և բաղդատել մեծից մինչև փոքր խմբերի: Այսինքն՝ ներկայացնել տվյալ նյութը որպես ամբողջություն, ապա քայլ առ քայլ այն մասնատել և դասակարգել: Արդյունքը ներկայացնել և բացատրել ընկերներին: Որպես գլխավոր բաղադրիչ առանձնացվում են մայրցամաքները, օվկիանոսները և աշխարհամասերը: 7-րդ դասարան, թեման- «Աշխարհագրական քարտեզ» թեմայի շրջանակում անցկացվել է գործնական աշխատանք, որի ընթացքում աշակերտները ներկայացնում են տեղեկություններ քարտեզի, դրա կիրառման, նշանակության և քարտեզագրական պատկերման եղանակների մասին: Դասարանը բաժանվում է 4 խմբի: Յուրաքանչյուր խմբին տրվում է փոքրիկ հետազոտություն, որի արդյունքում պետք է պարզեն, թե

	ինչպե՞ս են պայմանական նշանները պատկերվում քարտեզի վրա և կազմեն իրենց սեփական օրինակը: Արդյունքները քննարկվում են դասի ավարտին: 8-րդ դասարան, թեմա - «Եվրոպա» Ուրվագծային քարտեզի վրա աշակերտները պատկերում են Եվրոպայի քաղաքական քարտեզը՝ նշելով երկրները, մայրաքաղաքները: Քարտեզի վրա հատուկ գծանշաններով առանձնացվում են տարածաշրջանները: Աշխատանքը կատարվում է անհատական սկզբունքով: 9-րդ դասարան, թեմա-«Հայկական լեռնաշխարհի ջրագրական ցանցը»: Գործնական աշխատանքը իրականացվել է 2 փուլով: Առաջին փուլի ընթացքում աշակերտները նախապես ծանոթացել են դասի նյութի հետ, մանրամասն ուսումնասիրել տանը և հավաքել լրացուցիչ տեղեկություններ ու նկարներ Հայկական լեռնաշխարհի գետերի, լճերի մասին: Երկրորդ փուլում աշխատանքը շարունակվել է դպրոցում: Աշակերտները ներկայացրել են ջրագրական ցանցի առանձնահատկությունները, ցույց տվել գետերը, լճերը քարտեզի վրա: Այնուհետև իրենց հավաքած տեղեկությունները ներկայացրել են դասընկերներին և կատարել ընդհանուր քննարկում: Գետերի մասին տեղեկությունները և նկարները փակցրել են մի պլակատի, իսկ լճերինը մյուս պլակատի վրա: Արդյունքում գործնական աշխատանքը ստացել է արդյունավետ, ուսուցողական և իր մեջ ամփոփել է 3 գլխավոր տարրեր՝ վերարտադրողական, որոնողական և ստեղծագործական: Թիրախային խումբ-Կամարիսի Ա. Սիմոնյանի անվան միջնակարգ դպրոցի 6, 7, 8, 9-րդ դասարանների աշակերտներ:

Ներածություն

Գիտելիքների արագ զարգացման և նրանց մի մասի հնացման պայմաններում ուսուցման բովանդակությունը ևս կրում է համապատասխան փոփոխություններ. սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ, այն ինչ համեմատաբար կայուն է ժամանակի մեջ: Եթե սովորողը տիրապետում է տվյալ գիտության հիմունքներին և ընդունակ է սովորելու, ապա նոր իրավիճակներում նա կարող է գիտելիքների պակասը լրացնել ինքնուսուցմամբ: Ձևսեմացնելով տեսական հիմնարար գիտելիքների դերը՝ կրթության մեջ մեծ կարևորություն են տալիս ուսուցման պրակտիկ ուղղվածությանը: Ուշադրություն դարձնել այն գիտելիքներին ու կարողություններին, որոնք, ենթադրվում է, որ կիրառություն կգտնեն գործնական կյանքում: Ուսուցման պրակտիկ ուղղվածությունը կարևորվում է ոչ միայն ստացած գիտելիքների մնայունության ապահովման և կենսական տարբեր իրադրություններում նրանց կիրառման տրամաբանությամբ, այլ նաև սովորողների մեջ կայուն ուսումնական մոտիվացիա ձևավորելու անհրաժեշտությամբ:

Գաղտնիք չէ, որ բնական գիտությունների հանդեպ սովորողներն ակտիվ հետաքրքրություն չունեն: Դեպի պրակտիկան կողմնորոշված ուսուցումը նպատակ ունի գիտելիքները կապելով փորձերի, կյանքի հետ դրանք առավել հետաքրքիր դարձնել: Նման պարագայում սովորողը հասկանում է իր ձեռք բերած գիտելիքների կենսական նշանակությունն ու իմաստը, ասել է թե՝ ապահովվում է գիտելիքների իմաստավորված յուրացում: Իմաստալից, անձնային նշանակություն ստացած գիտելիքը մոտիվացիոն հզոր գործոն է և կարող է սովորողների ապագա մասնագիտական կողմնորոշման մեջ արդեն լուրջ դերակատարում ունենալ: Գործնական աշխատանքը դպրոցում բավականին մեծ դեր և նշանակություն ունի:Այսպիսի աշխատանք կատարելիս սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակ ը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Այն դիտարկվում է որպես ուսուցման միջոց□ Գործնական աշխատանքների անցկացումն ունի մի շարք առանձնահատկություններ: Այդ առանձնահատկություններին էլ մենք կանդրադառնանք այս հետազոտության ընթացքում:

1.Գործնական աշխատանքի կարևորությունը

Ուսումնասիրելով մանկավարժության պատմությունը, ծանոթանալով հայ և օտար ազգերի մանկավարժների հայացքներին, առաջադրած սկզբունքներին, մեթոդաբանությանը՝ առանձնացրել ենք մի

ֆանիսին, ովքեր ուսումնառության մեջ կարևորություն են տվել գործնական աշխատանքներին: Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի: Նա գտնում էր, որ հարկավոր է ուսուցման ընթացքում ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների գործնական ուղղվածությանը և զարգացնել դրանք: Թ. Մորին, Թ. Կամպանելլային, Սեն- Սիմոնը, Շ. Ֆուրյեին, Ռ. Օուենին այն կարծիքին էին , որ ճիշտ դաստիարակության միջոցով կարելի է ստեղծել բավականության և արդարացիության սկզբունքների վրա հիմնված հասարակություն, սակայն ուշադրության կենտրոնում հարկավոր է պահել գործնական ուղղվածությունը: Ե. Ա. Գոլանտը, Ս. Ի. Պերովսկին ուսուցման մեթոդները դասակարգել են երեք խմբերում՝ խոսքային, զննական և գործնական: Դասակարգելիս հիմք են ընդունել ինֆորմացիայի ըմբռնման բնույթը:

Մ. Սկատկինը և Ի. Յա. Լերները հիմք ընդունելով կրթության բովանդակության յուրացման մեջ սովորողների իմացական հնարավոր բնույթը, առանձնացրել են ուսուցման հետևյալ մեթոդները՝ բացատրական- ցուցադրական, ինֆորմացիոն-ռեցեպտիվ, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանք, մասնակի որոնողական կամ էվրիստիկական և հետազոտական:

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկությունները ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ: Մանկավարժական գործընթացի կառավարումը նախևառաջ սկսվում է նպատակի առաջադրումից, սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների հաշվառումից, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել մանկավարժական գործընթացը: Մանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր են նաև մանկավարժական հայտորոշումը և արդյունքների կանխատեսումները, որոնք ուսուցչին տալիս են մեկ քայլ առաջ տեսնելու, սեփական գործունեության արդյունքները նախագծելու հնարավորություն, տեսականը վերածելու գործնականի:

Գործնական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել գործնական աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:Միայն այս դեպքում աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական

դասարաններում գործնական աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ , հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները: Աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ գործնական աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման ֆայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ:

Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:[1, 54-58]

2.Գործնական աշխատանքի կարևորությունը որպես ձևավորող գնահատում

Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորվում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը: Գործնական աշխատանքները բազմազան են. պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, տեսածի, լսածի ներկայացում ամենատարբեր միջոցներով, որը կարող է լինել պաստառ, սահիկ և այլն:

Գործնական աշխատանքները կարող են իրականացնել ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով, ինչպես դպրոցում, այնպես էլ տանը: Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան բոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարբեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը: Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում գործնական աշխատանքը, եթե , իհարկե, աշխատանքն ունի անհատական բնույթ: Գործնական աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և

հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար: Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին:Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ,օրինակ՝բազմապատկման կամ բաժանման, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով:Առավել դժվար է, օրինակ ընտրել յուրաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ:Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը: Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է:[5, 36-37] Ընտրել հետաքրքիր առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող են խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները:Այդ պատճառով այդպիսի սովորողների համար հանձնարարական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում.Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր: Գործնական աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում գործնական աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը: Գործնական աշխատանքը կազմելիս ցանկալի է , որ նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին: Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել: Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել:[2, 36-398 Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյունավետության բարձրացմանը: Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Հետո որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի: Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով: Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

Գնահատման մասին խոսելիս պետք է հաշվի առնել հանրակրթության պետական նոր չափորոշչով նախատեսված ուսումնառության արդյունքների գնահատման սկզբունքները. պետական չափորոշիչը ձևավորող հանրակրթական հիմնական ծրագրերի բաղադրիչներից մեկն էլ սովորողների գնահատման ձևերն են: Ինչպես գիտենք՝ հանրակրթական դպրոցներում ընթացիկ գնահատումն իրականացվում է 2 եղանակով՝ ֆանակական /միավորային/ և ձևավորող/ուսուցանող/:

Ձևավորող գնահատումը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների համատեղ գործունեություն է, որի ընթացքում դիտարկվում են յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ընթացիկ արդյունքները, խնդիրներն ու դժվարությունները, այնուհետև՝ հենվելով սովորողի մտածողության տեսակի, ուսումնառության ոճի վրա՝ մշակվում են դրանք բարելավելու, հաղթահարելու ուղիներ:[4, 56-58]

Ձևավորող գնահատումը ուսուցչին թույլ է տալիս.

- հստակ ձևակերպել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատվելիք կրթական արդյունքը և կազմակերպել իրենց աշխատանքը դրան համապատասխան
- աշակերտին դարձնել ուսումնական և գնահատման գործունեության առարկա
- կարող է օգնել սովորել սխալներից
- կարող է օգնել հասկանալու, թե ինչն է կարևոր
- կարող է օգնել հասկանալ, թե ինչ են անում
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չգիտեն
- կարող է օգնել բացահայտել այն, ինչ նրանք չեն կարող անել

Ձևավորող գնահատումը հիմնված է չափանիշների և հենանիշերի վրա: Չափանիշների վրա հիմնված գնահատման համակարգը պետք է հնարավորություն տա որոշել, թե որքանով է հաջողությամբ յուրացվել որոշակի ուսումնական նյութ, որոշել, թե արդյոք ձևավորվել է որոշակի գործնական հմտություն, ստուգել սովորողի ձեռք բերած մակարդակը, որը դրված է ուսումնական առաջադրանքում:

Ժամանակակից մանկավարժությունը ձևավորող գնահատումը համարում է սովորողներին տրամադրվող տեղեկատվական հետադարձ կապ, այն կիրառվում է ամբողջ դասընթացի ընթացքում՝ շարունակաբար ստուգելով՝ արդյո՞ք ուսումնառություն եղե՞լ է, թե՝ ոչ: Եթե այո՝ ապա ի՞նչը/ինչե՞րն են նպաստել դրան: Եթե ոչ՝ ինչո՞ւ և ինպե՞ս պետք է կազմակերպվի վերաուսուցումը:

Ինչպես նշվեց՝ նոր հպչ-ի գնահատման համակարգում առանձնահատուկ կարևորություն է տրվում ձևավորող գնահատմանը, հետևաբար՝ մեծ թափով ուսումնասիրվում և առաջարկություններ են արվում այս բնագավառում: Այդ նպատակով ԿԶՆԱԿ- ը ուսումնասիրել և ուսուցչի սեղանին է ներկայացնում գնահատման հետևյալ բաղադրիչները և բազմատեսակ սանդղակներ՝ տարատեսակ կարողություններ գնահատելու համար:[1, 30-36]

Ըստ ԿԶՆԱԿ-ի մասնագետների՝ ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում:

1. Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:
2. Սովորողների ակտիվ մասնակցություն սեփական ուսումնառության գործընթացին:
3. Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:
4. Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:
5. Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

3.Աշխարհագրության դասավանդման գործում նրա կարևորությունը և անհրաժեշտությունը

Աշխարհագրությունը բոլոր երկրների դպրոցների առանցքային հանրակրթական առարկաներից է և պատշաճ տեղ է գրավում ուսումնական ծրագրերում: «Աշխարհագրություն» դպրոցական առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել նվազագույն աշխարհագրական և քարտեզագրական մշակույթ, որն անհրաժեշտ է լիարժեք քաղաքացու համար՝ անկախ ապագա մասնագիտությունից ու գործունեության ոլորտից: Դպրոցական աշխարհագրությունն ունի կրթական և դաստիարակչական բացառիկ նշանակություն: Այն դպրոցական մյուս դասընթացների հետ միասին իրականացնելով ընդհանուր խնդիրներ, ունի նաև եզակի գործառույթ: Աշխարհագրությունը հանրակրթական միակ առարկան է, որ տալիս է Երկրի՝ որպես մարդկության մոլորակի և նրա վրա մարդկային հասարակության տարածքային կազմակերպման մասին անմիջական պատկերացում: Դա պայմանավորված է գիտական գիտելիքների համակարգում աշխարհագրության տեղի և ներքին կառուցվածքի յուրօրինակությամբ: Գործ ունենալով ինչպես բնական պայմանների, այնպես էլ հասարակական օբյեկտների ու երևույթների հետ՝ աշխարհագրությունը գտնվելով բնագիտական, տեխնիկական և հասարա- 4 կագիտական գիտությունների շփման հատվածում, սերտորեն փոխկապված է դրանց հետ: Հանրահայտ է աշխարհագրության՝ որպես հանրակրթական դպրոցի հիմնական առարկայի աշխարհայացքային և համամշակութային դերը: Աշխարհագրությունն է, որ Երկրի վրա ընթացող բնական և հասարակական երևույթների զարգացման օբյեկտիվ օրենքների ու օրինաչափությունների օրինակով ձևավորում է սովորողների մատերիալիստական աշխարհայացք, երևույթների միջև եղած կապերի պատճառականության և աշխարհի միասնականության համոզմունք: Աշխարհագրությունն է, որ արդի աշխարհը իր զարգացման օրինաչափություններով և օրեցօր բարդացող հիմնախնդիրներով ճանաչելի է

դարձնում սովորողին, ծանոթացնում է նրան տարբեր երկրների բնությանը, բնակչությանն ու տնտեսությանը, տարբեր ժողովուրդների սովորություններին, նյութական ու հոգևոր մշակույթին: Աշխարհագրությունն է, որ սովորողին մղում է ճանաչելու սեփական հայրենիքը, հասկանալու և գնահատելու նրա տեղն ու դերը հարավոփոխ աշխարհում, ընկալելու այն փոխադարձ կապերի բնույթն ու առանձնահատկությունները, որոնք գոյություն ունեն մի կողմից՝ մարդու և շրջակա միջավայրի, մյուս կողմից՝ Հայաստանի և նրա հեռու ու մոտիկ հարևանների միջև, և դրանով իսկ նպաստում է նրա ինչպես ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացմանը, այնպես էլ էկոլոգիական կուլտուրայի ու քաղաքական կուլտուրայի ձևավորմանը: Աշխարհագրությունը երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացում աշխարհայացքային և ընդհանուր մշակութային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողին հաղորդելու նաև կիրառական նշանակության գիտելիքներ ու հմտություններ:

Դրանցից առավել կարևորներն են՝

1. յուրահատուկ միջազգային լեզվի՝ աշխարհագրական քարտեզից օգտվելու, ինչպես նաև պարզունակ քարտեզ-սխեմայի (տեղանքի հատակագծի) կազմման կարողություն,

2. տարբեր երկրներում ու միջազգային ասպարեզում առկա բնական և հասարակական երևույթների մասին բազմապիսի աղբյուրներից ստացվող տեղեկատվության ամբողջացման ու համակարգման կարողություն,

3. տեղանքում կողմնորոշվելու, բնության մեջ դիտարկումներ և չափումներ կատարելու կարողություն,

4. ժողովրդագրական և տնտեսական վիճակագրական տվյալների հետ աշխատելու կարողություն:

5. Աշխարհագրական տեղեկատվական համակարգից(GIS) և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու տարրական կարողություն: Այդ ամենի հետ մեկտեղ աշխարհագրությունը միակ դպրոցական առարկան է, որը նախնական պատկերացում է տալիս նաև աշխարհագրական գիտությանը հարակից մի շարք գիտությունների հիմունքների մասին, որոնց հատուկ ուսումնասիրությունը ինքնուրույն առարկայի ձևով չի մտնում հանրակրթության բովանդակության մեջ: Դրանք են՝ Երկրի մասին գիտությունները, մասնավորապես երկրաբանությունը և երկրաֆիզիկան, իսկ հասարակական գիտություններից՝ տնտեսագիտությունը, սոցիոլոգիան և ժողովրդագրությունը: Դպրոցական աշխարհագրության կարևորագույն խնդիրներից է սովորողների աշխարհագրական մտածողության ձևավորումը:[3, 40-45]

Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- վերարտադրողական, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),
- մասամբ որոնողական, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),
- ստեղծագործական, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Ձևավորող գնահատումը տեղեկատվություն հավաքելու անընդհատ գործընթաց է ուսուցման ընթացիկ, ուժեղ և թույլ կողմերի վերաբերյալ, որն օգնում է ուսուցչին վերանայել դասընթացի պլանավորումը և իր կարծիքն է հայտնում սովորողի առաջադիմության մասին: Երբեմն ձևավորող գնահատումը կիրառվում է լայն իմաստով՝ ներառելով հարցաթերթիկներից և խորհրդատվություններից

	բաղված բանակական առումով չփոփոխվող տեղեկատվությունը: Ձևավորող գնահատման ուժեղ կողմն այն է, որ նպաստում է ուսուցման բարելավմանը, իսկ թույլ կողմն այն է, որ կախված է պատասխան արձագանքի բնույթից:
Այլ տեղեկատվություն	Աշխարհագրական գիտելիքների շնորհիվ ամրապնդվում է այն համոզմունքը, որ աշխարհը ճանաչելի է, նյութական, միասնական, ամբողջական, բնության ու հասարակական կյանքի բաղադրիչները գտնվում են սերտ կապի մեջ, այդ բաղադրիչները առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում և փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1.Թադևոսյան Գ., Որակական սոցիալական հետազոտություններ, Երևան 2006թ.

2.Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Երևան 2011թ.

3.Հանրակրթության պետական կրթակարգ, միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան 2004թ.

4.Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Աշխարհագրություն, 7-8-րդ դասարանի ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013թ.

5.Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагогаисследователя / В. В. Краевский. - Самара, 2003

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	